


ԴԻՄԻ՛Ր
ՀԻՄԱ



**Նախաձեռնությունն իրականացվում է Միավորված ազգերի զարգացման ծրագրի «Կայուն համայնքներ» ծրագրի աջակցությամբ:**

**29 ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ ՓԵՏՐՎԱՐ**

# ԿԱՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ
# ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ
# ԲԱՂՐԱՄՅԱՆ

## +1000 փեթակ Հայաստանի համայնքներին

Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնք

ՄԱԶԾ «Կայուն համայնքներ» ծրագրի «HONEY-MONEY» նախագիծը Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում իրականացնելու է «Մեղվաբուծության հիմունքները» թեմայով երկօրյա դասընթաց՝ Բաղրամյան, Արգինա, Արևադաշտ, Արտամետ, Բագարան, Դալարիկ, Երվանդաշատ, Լեռնագոգ, Կողբավան, Հուշակերտ, Շենիկ, Վանանդ, Տալվորիկ, Քարակերտ բնակավայրերի մեղվապահությամբ զբաղվող բնակիչների համար:

Դասընթացի ավարտից հետո բոլոր մասնակիցները հանձնելու են քննություն, որի արդյունքների հիման վրա ՄԱԶԾ-ի կողմից տրամադրվելու են ՊՊՍ նյութից պատրաստված երկուական փեթակներ:

**Նախագծին կարող են դիմել 18-65 տարեկան այն անձինք ովքեր.**

- ունեն ՀՀ քաղաքացիություն,
- ունեն նվազագույնը երեք տարվա մշտական բնակություն նշված բնակավայրերում (յուրաքանչյուր ընտանիքից միայն մեկ անձ),
- ունեն առանձնացված և ցանկապատված տարածք՝ մեղվաբուծական տնտեսություն վարելու համար,
- պարտավորվում են փեթակների տրամադրման պահից պայմանագրով սահմանված ժամկետում տեղադրել մեղվաընտանիք՝ յուրաքանչյուր փեթակում 5 շրջանակ մեղվով պատված վիճակում,
- պատրաստակամ են իրականացնել ՄԱԶԾ կողմից ներկայացված պարտադիր պայմանները և պահանջները՝ մեղվանոցային տնտեսության բարելավման համար:

**Նախագծին կարող են դիմել նաև.**

- Լեռնային Ղարաբաղի փախստականները և 2020թ. տեղահանված 18-65 տարեկան այն անձինք (յուրաքանչյուր ընտանիքից միայն մեկ անձ), ովքեր ներկայումս մշտական բնակություն են հաստատել Բաղրամյան համայնքում,
- ովքեր պարտավորվում են փեթակների տրամադրման պահից պայմանագրով սահմանված ժամկետում տեղադրել մեղվաընտանիք՝ յուրաքանչյուր փեթակում 5 շրջանակ մեղվով պատված վիճակում:

**Նախագծին չեն կարող դիմել այն անձինք ովքեր**.

- նախորդ փուլով մասնակցել են «Honey-Money» նախագծին և հանդիսանում են Ծրագրի շահառու:

**Մասնակցության համար հարկավոր է մինչև ս. թ. փետրվարի 29-ը.**

- Մոտենալ Արարատի համայնքապետարան կամ նշված բնակավայրերի վարչական նստավայրեր, նախապես գրանցվել, վերցնել հայտը, ապա ձեռագիր լրացնել՝ կցելով անձնագրի/նույնականացման քարտի (անձնագրային և գրանցման տվյալների էջեր) պատճենները և մշտական բնակության վերաբերյալ տեղեկանքը:
- Հայտը կարող եք նաև ներբեռնել առցանց, տպել, ձեռագիր լրացնել՝ կցելով անձնագրի/նույնականացման քարտի (անձնագրային և գրանցման տվյալների էջեր) պատճենները և մշտական բնակության վերաբերյալ տեղեկանքը: Փաստաթղթերի ամբողջական փաթեթը կարող եք դասընթացի օրը հանձնել դասընթացավարին, եթե նախապես արդեն գրանցվել եք Համայնքապետարանում կամ բնակավայրերի վարչական նստավայրերում:

Դասընթացն անցկացվելու է Քարակերտ բնակավայրի համայնքային կենտրոնի նիստերի դահլիճում (հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնք, գ. Ք ար ակ ե ր տ, Մաշ տո ց ի փո ղ . , 77/1) ս. թ. մարտի 6-ին և 7-ին, ժամը 11:00-ից մինչև 16:00:

Հարցերի դեպքում աշխատանքային օրերին կարող եք զանգահարել +374 96 439323 նշված հեռախոսահամարով, ժամը 10-ից մինչև ժամը 17:00-ն ընկած ժամանակահատվածում:

Հայտը ներբեռնել այստեղից՝ https://bit.ly/honeymoney2024

# «HONEY-MONEY» ՆԱԽԱԳԻԾ
# ՀԱՅՏ

## ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

| | |
|---|---|
| Անուն, ազգանուն, հայրանուն | |
| Ծննդյան օր, ամիս, տարի | |
| Անձնագիր/նույնականացման քարտի համար | |
| Կոնտակտային հեռախոսահամար | + 374 |
| Այլընտրանքային հեռախոսահամար | + 374 |
| Էլեկտրոնային հասցե | |
| Հայտատուի կարգավիճակ | ☐ Ֆիզիկական անձ<br>☐ Անհատ ձեռնարկատեր<br>☐ Իրավաբանական անձ |
| Գրանցման հասցե<br>(մարզ, համայնք, փողոց, տուն) | |
| Փաստացի բնակության հասցե<br>(մարզ, համայնք, փողոց, տուն) | |

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ՆԵՐՔՈՆՇՅԱԼ ԲՈԼՈՐ ՀԱՐՑԵՐԻՆ:

*Ամբողջական չլրացված հայտերը չեն դիտարկվելու:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ

| | |
|---|---|
| Աշխատանքային փորձ մեղվաբուծության ոլորտում | ☐ Ունեմ (նշել քանի տարի) ___________<br><br>☐ Չունեմ |
| Ձեռնարկատիրական գործունեության փորձ | ☐ Ունեմ (նշել քանի տարի) ___________<br><br>☐ Չունեմ |
| Երբևէ մասնակցե՞լ եք մեղվաբուծության վերաբերյալ դասընթացների | ☐ Այո (նշել թեման, երբ և ում կողմից)<br>___________<br>___________<br>☐ Ոչ |
| Ունե՞ք արդյոք միջազգային կազմակերպությունների հետ աշխատելու փորձ | ☐ Այո (նշել կազմակերպություն/ները)<br>___________<br>☐ Ոչ |

## ԱՌԿԱ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

| | |
|---|---|
| Առկա ռեսուրսներ | ☐ Մեղվանոց ցանկապատված տարածքով ___________ ք.մ<br>☐ Բարեկարգ տարածք մեղրաքամի համար ___________ ք.մ<br>☐ Ձմեռանոցի տարածք ___________ ք.մ<br>☐ Մեղվապահի տնակ ___________ հատ<br>☐ Փեթակներ ___________ հատ<br>որից՝<br>☐ **Փայտից** ___________ հատ<br>☐ **ППУ** ___________ հատ<br>☐ **Այլ նյութերից** ___________ հատ<br>☐ Մեղվաընտանիք ___________ հատ<br>☐ Մեղրաքամիչ ___________ հատ<br>☐ Փուքս ___________ հատ<br>☐ Քերիչ ___________ հատ<br>☐ Արտահագուստ ___________ հատ<br>☐ Այլ գործիքներ (նշել)___________<br>___________ |

## ՄԵՂՎԱՆՈՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Ո՞րտեղ է գտնվում այս պահին ձեր մեղվանոցը | |
| Տեղափոխում եք արդյո՞ք մեղվանոցը | ☐ Այո (նշել տարածքները) ____________________ ________________________________________ ☐ Ոչ |
| Ինչպե՞ս եք կազմակերպում ձմեռումը | ☐ Դրսում ☐ Ներսում |
| Ունե՞ք արդյոք գրանցամատյան | ☐ Այո ☐ Ոչ |
| Ի՞նչ բուժումներ եք իրականացնում | |

## ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Տարեկան որքա՞ն մեղր եք արտադրում | Ընդհանուր ____________________ կգ Մեկ փեթակի հաշվով ____________________ կգ |
| Մեղրից բացի ի՞նչ մեղվամթերքներ եք արտադրում | Թվարկել՝ 1. 2. 3. |
| Ունե՞ք, արդյոք գրանցված ապրանքանիշ | ☐ Այո (նշել անվանումը) ____________________ ☐ Ոչ |
| Ունե՞ք, արդյոք փաթեթավորում | ☐ Այո ☐ Ոչ |
| Իրացնու՞մ եք արդյոք մեղրը | ☐ Այո (նշել որտեղ) ____________________ ☐ Ոչ |

## ՀԱՅՏԱՏՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

| | |
|---|---|
| Պատրաստ եք արդյո՞ք ներդնել միջոցներ անհրաժեշտ աշխատանքային գործիքներ և արտահագուստ ձեռք բերելու համար | ☐ Այո (նշել քանի ք.մ) ______________<br>☐ Ոչ |
| Պատրաստ եք արդյո՞ք պայմանագրով սահմանված ժամկետում տրամադրված փեթակներում տեղադրել մեղվաընտանիքներ | ☐ Այո<br>☐ Ոչ |
| Պատրաստ եք արդյո՞ք ներդնել ժամանակ մեղվաընտանիքների խնամքով զբաղվելու համար | ☐ Այո<br>☐ Ոչ |

## ՀԱՅՏԱՏՈՒԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

**Սույնով հավաստում եմ, որ**

- տեղյակ եմ, որ ամբողջական չլրացված հայտը չի դիտարկվելու Ծրագրի կողմից,
- տեղյակ եմ, որ ամբողջական փաստաթղթերի (հայտ, անձնագրի/նույնականացման քարտի անձնագրային և գրանցման տվյալների էջերի պատճեններ, մշտական բնակության վերաբերյալ տեղեկանք) բացակայության դեպքում իմ հայտը չի դիտարկվելու,
- պետք է պարտաճանաչ մասնակցեմ դասընթացին և, որ իմ փոխարեն չի կարող մասնակցել այլ անձ,
- տեղյակ եմ, որ ընտանիքից կարող է մասնացել միայն մեկ անձ,
- հայտով ներկայացված տեղեկատվությունը և բոլոր տվյալները ճշմարիտ են և ամբողջական,
- անհրաժեշտության դեպքում պատրաստ եմ ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն և լուսանկարներ,
- համաձայն եմ, որ ներկայացված տվյալները կարող են օգտագործվել դոնորի կողմից միայն ՄԱԶԾ «Կայուն համայնքներ» ծրագրի շրջանակներում,
- համաձայն եմ, որ ներկայացված տվյալները ՄԱԶԾ ԿՀ-ն ըստ անհրաժեշտության տրամադրի այլ դոնոր կազմակերպությունների՝ հետագա համագործակցության համար:

### ☐ ՀԱՎԱՍՏՈՒՄ ԵՄ

**Հայտը լրացնելու ամսաթիվ** (օր/ամիս/տարի) ______________________________

**Անուն, ազգանուն** ______________________________

**Ստորագրություն** ______________________________